

ՎԵՐՁԻՆ ՄԻՋՆԱԲԵՐՐԻ ՓԼՈՒՉՈՒՄԸ

- Ա. -

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԲԾԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ

Բ. Աշխարհամարտն ետք սկսում է մինչև անցել դարու ինստիտուցիաները շարունակուող "պաղ պատերազմի" խառնակ ու անկանխատեսելի ժամանակները մեթոդայա աշխարհաբարձրական դեպքերուն համեմատ մանկական խաղ կը յիշեցնեն:

Այդ ո՛չ հեռավոր ու "երանելի" օրերուն, երկիրներու քաղաքական գործիչներն ու պետութիւններու օրէնսդիր մարմինները, ամրան ընթացքին կը վայելէին իրենց "վաստակած" հասգիստի իրաւունքը եւ քաղաքական դաշտը, առնուազն մէկ-երկու ամիս կ'ամայնար:

Հիմա այդպէս չէ, վտանգաւորին սահմանը շատոնց անցած աշխարհա-քաղաքական գործադրումները այլեւս նկատի չեն առնել տարուան եղանակները եւ աւելին՝ թիկունքէն գիրար կը հարուածեն ճիշդ այն ատեն, երբ դիմացինը բնաւ չ'անկախելու մանտրինակ սարդակը...

Ամիսներ ամառ, երբ Մերձուոր Արեւելքի գաղթականներուն օժանդակելու համար երամիութիւնը վեց միլիար տուար խոստացած էր Թուրքիոյ, "Արարատ" օրաթերթը գրեց, որ եղածը միայն քաղաքական աճապարարութիւն է: Հակառակ "թրքական քաղաքական միտքի ճկունութեամբ" հիացողներուն՝ օրաթերթը գրեց նաեւ, թէ Եւրոպան, իր ամբողջ պատմութեան ընթացքին, երբեւէ անշահախնդիր Նիթական օգնութիւն չ'է ցուցաբերած եւ ոչ մէկ պետութեան: Եւ, եթէ նոյնիսկ պատահած է, ապա յատուկ դիմացինի քաղաքական զգոնութիւնը տկարացընելու նպատակով: Այդպիսին է Եւրոպական քաղաքականութիւնը եւ այստեղ դիւանագիտական առումով ոչինչ կայ պահարակելի:

Ով՞ ով, սակայն հայ ժողովուրդին շատոնց ծանօթ են քաղաքական այդ խորհրդանշանները:

...Սոյն տարուան Յունիս 2-ին, Գերմանիոյ Պունտեսթակը ընդունեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը, որ ունի՝ «1915 թ. հայերու եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութեանց Ցեղասպանութեան յիշատակի եւ ոգեկոչման մասին» անուանումը:

Բանաձեւը ընդունուած է ճշգրտ մեծամասնութեամբ՝ ունեւալով ընդամենը մէկ դէմ եւ մէկ ձեռնալի ձայներ: Ելոյթ ունեցողները միաձայն ընդգծած են անցեալի հետ առերեսումի անհրաժեշտութիւնը, նաեւ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ հաշտեցման գործընթացին նպաստելու մղումները:

Պունտեսթակի մէջ բարձրածայնած են նաեւ Օսմանեան Թուրքիոյ ոճրագործութեան մասին, նաեւ այն մասին, որ Գերմանիոյ քայլը ոչ թէ հայց է եւ մեղադրանք, այլ խոնարհում՝ զոհերու յիշատակին առջեւ:

Եւ, ըստ մեզի, ամենէն կարելորը. ընդունուած բանաձեւին մէջ յստակօրէն ընդգծուած է Օսմանեան կայսրութեան դաշնակից Գերմանիոյ մեղակից դերակատարումը Հայոց Ցեղասպանութեան մէջ:

Պունտեսթակի մէջ Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւի ընդունումէն վերջ նիստերու դահլիճին մէջ ներկայ հայերը իրենց շնորհակալութիւնը յայտնուր պատահաբար են Հայաստանի որոշակը բարձրացուցին:

Պերլին հաւաքուած հայերը որոշման հրապարակումէն վերջ հայոց աւանդական քոչարի պարեցին՝ ծածանելով Հայաստանի Հանրապետութեան եռագոյնը...

Գերմանիոյ Պունտեսթակի պատմական այս որոշման մասին իրենց կարծիքները յայտնեցին նաեւ Անդրկովկասի մէջ՝ Գերմանիոյ գլխաւոր հովանաւորեալ Վրաստանի քաղաքական գործիչները, որ այսպիսի պարագայներու համար բացառիկ իրողութիւն է: Այս հանգամանքը անգամ մը եւս կը բացատրէ, որ այս ամբողջ լաւագոյնս ծրագրուած եւ լրջագոյն քաղաքական միջոցառում էր:

Ահա, թէ ինչ կը գրէ վրացի յայտնի քաղաքագետ Կելա Վասածէ: "Այս պարագային տուեալ բանաձեւը միանշանակ քաղաքական քայլ էր: Ես գիտեմ նաեւ, որ մէկ պատգամաւոր դէմ եղած է, միւսը՝ ձեռնապահ, իսկ մնացեալները՝ կողմ: Ըստ իս, այս քայլը պայմանաւորուած է Թուրքիա-Գերմանիա փոխյարաբերութիւններով: Կը կարծեմ, թէ այստեղ պէտք է նկատի առնել այն, որ Երտողան կը շարունակէր բաւական կոշտ պայմաններ առաջադրել Երամիութեան:

Ինչ կը վերաբերի այն հարցին, թէ ասիկա արդեօ՞ք Գերմանիոյ կողմէ Թուրքիոյ հասցուած ապտակ էր, ապա ես բնաւ հակառակ չեմ այս կամ այն պետութեան քայլերուն մէջ զգացականը տեսնել, այլ միայն իրատեսական, ստանախորտ ու ճշգրիտ հաշուարկներ: Գերմանիան հիմա կրնայ օրինակ ծառայել՝ իր անցեալին հետ առերեսուելու առումով, սակայն իւրաքանչիւր երկիր ինքնուրոյն պէտք է գայ այդ ըմբռնման":

Կրաց քաղաքագետին միտքը կը զարգացնէ գերմանացի պատգամաւորը. "Պունտեսթակի այս բանաձեւը բարոյապէս պատուարծան քայլ է, ինչպիսին տարիներ ամառ Ֆրանսայի Ազգային ժողովին որոշումն էր":

Միայն, եթէ ոչ մտորեալ են անոնք, որոնք կը կարծեն, թէ Թուրքիոյ քաղաքական հոգեւոր հայրիկը Ամերիկան է: Միակ հաւատարիմ ու խնամակալ "հայրիկը" միշտ ալ Գերմանիան եղած է, եւ Օսմանեան կայսրութեան ու յետագային նաեւ Թրքական հանրապետութեան արհեստագործութեան ամբողջ ընթացքին անոնք՝ "հոգեւոր հայրիկի" այդ անպատուաբեր կեցումին արժանանալու համար միշտ առճակատած են այսպիսի յաւակ-

նութիւններ ունեցող ուրիշ քաղաքական "բորենի" մը՝ Մեծն Բրիտանիոյ հետ:

Այս օրերուն, սակայն, կատարուած է այն, ինչ կատարուած է՝ Գերմանիան ընդունած է Հայոց Ցեղասպանութիւնը, մասնակիօրէն մատնանշելով իր մեղակից գործուներեան մասին:

Եւ այս ամբողջը կատարած է դոյզն իսկ չչեղելով գերմանական աւանդական քաղաքականութեան հաշունակատութեան, գաղտնապահութեան եւ հարուածին դիպուկութեան սկզբունքայնութեան:

Նոյնիսկ քաղաքականութեան հետ կապ չունեցող մարդիկ չեն կրնար պատահականութիւն սեպել արդէն իսկ պատմական դարձած այն հանգամանքը, որ գերմանական Պունտեսթակի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը տեղի ունեցաւ ճիշդ ու ճիշդ այն օրը, երբ 95 տարի ամառ, Պերլինի մէջ, ծայր ամառ արհեստագործութեան ֆաշիստ դիտապատ ընող Սողոմոն Թեիլերեանի դատավարութիւնը...

1921 Յունիս 2-ին գերմանական դատարանի մէջ Սողոմոնի դատապաշտպան դոկտոր Սիմայէր Քիր իր պաշտօնական ճանիք մէջ ըսաւ.

"Սողոմոն Թեիլերեան ինք չէր, որ փողոց կ'իջնէր Թալէթա փաշան սպաննելու, անոր հետ կ'իջնէին դարերը, միլիոնաւոր սպաննուածները:

Ան իր ձեռքով իր ամբողջ ժողովուրդին պատուը դրօշակը կը տանէր, ողջ-ողջ խոշտանգուածներուն, իր լկուած ընտանիքին դրօշակը...":

Գերմանիոյ մէջ ինչ գիտնի թրքական համայնքի առկայութեամբ, այս մէկը յիշուի, Երտողանին եւ անոր համախոհներուն հասցուած ամենէն մեծ ապտակն էր: Ապտակ էր նաեւ բոլոր անոնց համար, որոնք առ այսօր ծանօթ կենդանիին յամառութեամբ կը հաւատան թրքական դիւանագիտութեան՝ ճկուն եւ իմաստուն ըլլալու մասին հեքիաթներուն:

Ըստածին լաւագոյն վկայութիւնը այն փաստն է, թէ ինչպէս արձագանգեցին թրքական իշխանութիւնները Գերմանիոյ խորհրդարանի կողմէ Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւի ընդունման:

Թուրքիոյ նախագահ Աբդուլ Թայիպ Երտողան նախ յիշեցուց, որ Թուրքիոյ տարածքին շուրջ 100 հազար հայ կը բնակի:

«Անոնց կենը մեր քաղաքացիներն են: Եթէ մենք նրբանկատ չըլլայինք, մեր ոչ քաղաքացի հայերը ինչո՞ւ պիտի պահէինք: Երտողայի պէս գանոնք Հայաստան կը դրկէինք եւ օր մը պիտի ընենք ասիկա...":

Այսպէս սպառնացած է Երտողան, որ, ի դէպ, այսօրինակ սպառնալիքներ ինչեցուցած էր նաեւ անցեալ տարի: Թուրքիոյ նախագահը յայտարարած է, թէ՛ Գերմանիան ամենավերջին երկիրն է, որ իրաւունք ունի գիրեք ցեղասպանութեան մէջ մեղադրելու եւ գերմանացիներուն դիմելով՝ խորհուրդ տուած է վերանայիլ Հոլոքոսթի ճանաչումը:

"Պունտեսթակի պետութեան ի՞նչ կ'ըսես, - յոխորտացած է ան Գերմանիոյ հասցեին, - անգամ մը եւս կ'ընդգծեմ, մենք մեր անցեալն ամէնալու պատճառ չունինք: Սակայն մեզ, Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւերով սպառնացող երկիրներէն ամեն մէկուն ետին միլիոնաւոր անմեղ մարդոց արիւնք կայ":

Հոս թերեւս ճիշդ է Երտողան, սակայն այն վերապահութեամբ, որ ինչպէս միշտ, ան իր դէմ ինչո՞ւ մեղադրանքներուն մասին խօսելու փոխարէն կը փորձէ մեղքի իր բաժինը բարդել ուրիշ ուժերու վրայ, որոնք այս կամ այն ձեւով գոնէ փորձ կ'ընեն մեղմել պատմական մեղսագործութեան իրենց բաժինը...

Յ.Գ. Յարգելի ընթերցող, եթէ նկատեցիր, այս յօդուածին առաջին մասին մէջ, իս՞ոք իսկ չեղաւ, թէ այս կապակցութեամբ ինչ վերաբերմունք ցուցաբերեց հայոց քաղաքական միտքը:

Ի՞նչ թեր է դէմ կարծիքներ ինչեցին մեր պետական այրերուն կողմէ:

Այդպիսի կարծիքներու մասին խօսք չեղաւ, ո՛չ թէ կողմակալութեան, այլ կարծիքներու ի սպառ բացակայութեան պատճառով:

Հայաստանի Հանրապետութեան որեւէ գերատեսչական մարմնի կողմէ այս առնչութեամբ եւ ոչ մէկ համապատասխան մեկնաբանութիւն կամ բացատրութիւն տրուեցաւ: Նոյնիսկ ո՛չ ոք փորձեց բացատրել, թէ ինչո՞ւ այս ամբողջը տեղի ունեցաւ ճիշդ Յունիս 2-ին, եւ ինչո՞ւ Գերմանիան որոշեց այսպէս հետեւողական, Ցեղասպանութեան 101 տարի վերջ հաշի պահանջել Թուրքիայէն... Եւ եթէ տեղի ունեցաւ այն, ինչ տեղի ունեցաւ՝ մեր քաղաքական ո՞ր մէկ ատենը գերմանացիներուն պահանջը կամ առաջարկ ներկայացուց գաղտնազերծել իրենց արխիւները... առաւել եւս հիմա, այս պահուս, երբ գերմանացիները ընդունեցին Ցեղասպանութեան փաստն ու իրենց մեծ մեղքի առաջմ փոքր բաժինը...

Չենք կարծեր, որ այս հարցերուն պատասխանները իրենց մէջ պետական գաղտնիութիւն կը պարունակեն: Առաւելաբար հակուած են մտածելու, որ երաճող մեր քաղաքական այրերուն կողմէ իրավիճակ ո՛ր ճիշդ ընկալելու եւ գնահատելու կամ մեր մէջ ինչն է ի վեր բոյն դրած անտարբերութեան արդիւնք է...

Այս բոլորին մասին, սակայն այս յօդուածին երկրորդ եւ վերջին մասով:

ԷՏՈՒՐՏ Ա.ԳՐԻԳՈՐԵԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ» ՀԱՆԴԻՊՈՒՄ ԶՐՈՅՑ ԴՈԿՏ. ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Երէկ երեկոյեան, Նոր Հաճոյ 3.4.Բ.Մ.-ի սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ այցով Լիբանան գտնուող նախկին լիբանանահայ Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանի հետ «Ազգային Մարտահրաւերները» խորագրեալ գրոյց-հանդիպումի ձեռնարկը, կազմակերպութեամբ «ԱՐԱՐԱՏ» օրաթերթի եւ ներկայութեամբ Ս.Մ.Գ.Կ.Ի Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Կիրակոս Թիթիւնճեանի եւ անդամներուն, մասնաճիւղերու եւ միութեանկան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ քննարկուելիք նիւթով հետաքրքրուած հասարակութեան:



«ԱՐԱՐԱՏ» օրաթերթի տնօրէնուհի Ընկ.Կի Անի Եփրեմեան քննարկեց խօսքով ներկայացուց օրուան բանախօսը եւ յատուկ յիշատակումով մատնանշեց որ Պէրլուք ծնած իւրիւր բրիտանական անցագրին մէջ նշուած է Նոր Հաճոնը, որպէս ծննդավայր, հետեւաբար կարելի է արդարօրէն ըսել որ Դոկտ. Զիլինկիրեան վերադարձած է իր ծննդավայրը, ուր տակաւին կ'ապրին մարդիկ, որոնք անձամբ ծանօթ էին անոր, որպէս մանուկ, ինչպէս նաեւ անոր ծնողաց եւ հարազատներուն:

Եփրեմեան ապա ներկայացուց օրուան բանախօսը որպէս Օքսֆորտ համալսարանի դասախօս, որուն քննարկումները, վերլուծումները եւ առաջարկները հիմնուած են իր քաղաքական, ընկերաբանական, տնտեսական եւ աստուածաբանական ուսմունքներուն վրայ եւ կը բխին իր մատուրական լայն տեսադաշտէն:



Որպէս Հասարակաբանական Գիտութիւններու դոկտոր, ան 10 տարի պաշտօնավարած է Գերմանիոյ Համալսարանի մէջ եւ 2012-էն ի վեր Օքսֆորտ համալսարանի Արեւելագիտութեան բաժնի մէջ Արեւելքի Զրիստոնէութեան եւ Հայագիտական ուսմունքներու դասախօս մասնագետ է: Ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ՝ Հայ եկեղեցու, Միջին Արեւելքի հայ համայնքներուն, հարաւային Կովկասի ու Դարաբարի հիմնախնդիրներուն եւ վերջին տարիներուն Միջին Արեւելքի տագնապներուն մասին:

Ապա «ԱՐԱՐԱՏ»-ի տնօրէնուհին քննարկեց Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանը, որ իր մասնագիտութեան ծիրին մէջ հասարակ յայտարարներէն մեկնեւ ներկայեւրեան ներկայացուց ընդհանրապէս աշխարհասփիւռ հայութիւնը եւ ի մասնաւորի Միջին Արեւելքի հայութիւնը յուզող իրատեսապէս մատնանշեց որ արեւմտահայերէնի գծով չի նկատեր զայն որպէս վտանգուած լեզու, այլ յաղթանակած, որ 100 տարիներ շարունակ հակառակ հողի չզոյրութեան, սակայն տակաւին կը շարունակեալ ապրիլ եւ մալ գործածական եւ ծաղկող ու զարգացող լեզու: Ըստ Զիլինկիրեանի, արեւմտահայերէնը չէ որ նահանջած է, այլ զայն գործածողները, այսինքն մենք՝ իբրեւ հաւաքականութիւն:

Ներկաներ, իրենց կարգին, երբեմն հակառակ կարծիքներով եւ երբեմն ալ համաձայնելով բանախօսին հետ, անոր ուղեցին իրենց հարցերը, որուն գծով ալ տեղի ունեցան գրոյց-քննարկումներ եւ հարցադրումներ, ինչ որ եկեղեցի կու տայ որ օրուան ձեռնարկը հասած էր իր նպատակին եւ յաջողած:

ԹԻՔԱԿԻՑ

Թրքական «Գորշ գայլեր» ծայրայեղ ազգայնական կազմակերպութեան քաղաքական թեւը հանդիսացող Ազգայնական շարժում կուսակցութեան նախագահ Տեւրթ Պահչելի, իր կուսակցութեան Յունիս 8-ի նիստին ընթացքին արտայայտուած է Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան վաւերացման մասին՝ ցոյց տալով, որ վերջին 101 տարիներուն շատ բան չ'է փոխուած ազգայնամուլներու մտայնութեան մէջ:

Թրքական «Միլիլիթ» թերթը կը գրէ, թէ Պահչելի արդարացուած է երիտօրէններուն կողմէ հայերը տեղահանութեան ենթարկելու որոշումը՝ գայն անուանելով «հիանալի որոշում»:

Օգտագործելով թրքական կեղծ թեզերը՝ ան մասնաւորապէս ըսած է. «Ով ի՞նչ ուզէ, թող ըսէ. թուրք ժողովուրդի թիկունքէն դաշնակալութեան տեղահանութիւնը հիանալի քաղաքական որոշում էր, որ փրկեց թրքական հայրենիքը: Փա՛ռք»

«ՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՎԱԿԼԻ ՈՐՈՇՈՒՄ ԷՐ»



Աստուծոյ, որ կատարուած է այն, ինչ անհրաժեշտ էր: Տեղահանութիւնը տեղի՞ն էր: Այսօր ալ եթէ նման իրավիճակ ստեղծուի, անիկա անխուսափելի պիտի ըլլայ: Այդ ժամանակաշրջանի իթթիհատական (երիտօրէններ) ղեկավարները ազգային գիտակցութեամբ կատարած են իրենց պարտականութիւնը:

Պահչելի խօսած է նաեւ Գերմանիոյ խորհրդարանին մէջ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւին կողմ քուէարկած թուրք պատգամաւորներուն մասին՝ կրկին օգտագործելով վիրաւորական ձեւակերպումներ: Ան համաձայն գտնուած է վերոնշեալ պատգամաւորներուն արիւնք գննելու անհրաժեշտութեան մասին Երտողանի կատարած անհեթեթ յայտարարութեան, աւելցնելով, որ այդ պատգամաւորներուն արիւնք «այս-բան» փճացած է, որ նոյնիսկ կարելի չ'է գայն արին կոչել: